ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՄԱՅԼԵՌ ՄԱՈՒՆԹԱՅՆ ՌԵԶՈՐԹ» ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ք. Երևան **06 հուլիսի 2022 թ.**

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» ընկերություն (այսուհետ՝ Ընկերություն) միջև:

Հաշվի առնելով Ինստիտուտի և Ընկերության փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը.

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ.

Կարևորելով պրակտիկ աշխատանքների համատեղ իրականացումը և արդյունքների ներդրումը ի շահ Հայաստանի Հանրապետության.

Բարձր գնահատելով Ինստիտուտի և Ընկերության պատրաստակամությունը մասնագիտական կրթական զարգացման գործընթացին նպաստելու և բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին աշխատանքով ապահովելու համատեքստում.

Հիմք ընդունելով փոխադարձ պայմանավորվածությունները.

Որոշեցին կնքել սույն Հուշագիրը հետևյալի մասին՝

1. Համագործակցության նպատակը

Սույն Հուշագրով Ինստիտուտը և Ընկերությունը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. Համագործակցության ուղղությունները

2.1 Սույն Հուշագրով համագործակցության ուղղություններն են՝

- Մասնագիտական կրթության զարգացումը,
- Երիտասարդ մասնագետների համար գործնական գիտելիքների ամրապնդման և խորացման հնարավորությունների ստեղծումը,

- Ինստիտուտի ուսանողների արտադրական պրակտիկայի անցկացում Ընկերությունում,
- Ուսումնական գործընթացում ըստ անհրաժեշտության նորագույն տեխնոլոգիաների, մասնագիտական գրականության ապահովումը,
- Մարզումների կազմակերպումը՝ ֆիզիկական կուլտուրայի կիրառման արդյունավետության բարձրացման, հանրային առողջության քարոզչության ոլորտներում
- Կրթական ծրագրերի իրականացման գործընթացում Ընկերության առաջատար մասնագետների ներգրավումը,
- Համապատասխան ոլորտներում երիտասարդների ներուժն ու տաղանդը գործի դնելու բացառիկ հնարավորությունների բացահայտումը,
- Բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտներին աշխատանքի ապահովում և կարիերայի զարգացումը:

2.2 Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև

2.2.1 Ինստիտուտի ուսանողների մասնագիտացմանն առնչվող գործնական և մասնագիտական կատարելագործման, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների ներդրման ուղղություններով:

2.2.2 Ինստիտուտի և Ընկերության լիազոր ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի միջոցով

2.2.3 Ներդրումային, նորարարական, անվանական կրթաթոշակների, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման շուրջ,

2.2.4 Գիտական համաժողովների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.2.5 Ինստիտուտի և Ընկերության գործունեության ոլորտներին առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում

2.2.6 Սույն Հուշագրի գործողության շրջանակներում Ինստիտուտի և Ընկերության գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, մարզաբազաների, տարածքների, գույքի օգտագործման միջոցով,

2.2.7 Երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում համապատասխան ոլորտներում հետազոտությունների, փորձաքննությունների իրականացման շուրջ,

2.2.8 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու գործում,

2.2.9 Ինստիտուտի ուսանողների մասնագիտացմանն առնչվող գիտագործնական և մասնագիտական կատարելագործման, ինչպես նաև գիտելիքների և հմտությունների ներդրման ուղղություններով:

3. Համագործակցության սկզբունքները

3.1 Ինստիտուտը և Ընկերությունը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. Եզրափակիչ դրութեր

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2022թ. հունիսի 6-ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Ինստիտուտ	**Ընկերություն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Մայլեռ Մաունթայն Ռեզորթ»
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Ադոնց 8
Ռեկտոր Դավիթ Խիթարյան	Հիմնադիր Տիգրան Հարությունյան
ստորագրություն, Կ.Տ.	ստորագրություն, Կ.Տ.